

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՏԻՊ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԽԱԺԱԿ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ

Հ. Թումանյանի ստեղծագործությունը միշտ էլ եղել է հայ գրականագիտության ուշագրություն կենտրոնում: Հենց միայն ետպատերազմյան տարիներին ամենայն հայոց բանաստեղծի մասին արժեքավոր աշխատություններ են հրատարակել բանաստեղծի դուստր Ն. Թումանյանը, արժանահիշատակ գրականագետ Ա. Ինճիկյանը, գրականագետներ է. Ջրբաշյանը, Կ. Գրիգորյանը, Լ. Հախվերդյանը, Զ. Ավետիսյանը և ուրիշներ: Լ. Կարապետյանի աշխատասիրությունը, մանրամասն ծանոթագրություններով և գիտական ապարատով ընթերցողներին հանձնվեց «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» սովոր հատորը: Լույս տեսան «Թումանյան, ուսումնասիրություններ և հրապարակումներ» գրքի առաջին և երկրորդ հատորները. մատենագիտական մի քանի ժողովածուներ և այլն:

Բանաստեղծի երկերի հրատարակություններն առանձին գրքերով նույնպես բազմաթիվ ու փառազան են: Դրանցից հիշատակելի են հատկապես «Գեղարվեստական երկեր» ժողովածուն՝ հրատարակված 1934 թ. և Զարենցի խմբագրությամբ և Ն. Թումանյանի ջանադիր աշխատակցությամբ, և գիտական, կամ, ինչպես ընդունված է ասել, ակադեմիական հրատարակության հ հատորները, որոնք լույս տեսան 1940—1959 թթ.:

Բացի այդ, Հ. Թումանյանի շատ երկեր, առաջին անգամը լինելով, ետմահու հրատարակվել են պարբերական մամուլում սկսած 1920-ական թվականներից:

Եվ, այնուամենայնիվ, դեռևս կան զգալի քանակով նյութեր, այդ թվում և ամբողջական բանաստեղծություններ, քիչ թե շատ ավարտուն հատվածներ ու առանձին չափածո տողեր, որոնք ցարդ անհայտ են ընթերցող հասարակայնությանը: Այս փաստը չի խոսում նախորդ ուսումնասիրողների անտեղյակության, կամ, առավել ևս, անբարեխղճության մասին, այլ բացատրվում է նրանով, որ ներկայացվող հատվածներն ու առանձին սեպեր գրառումները, ինչ-ինչ պատճառներով անմատչելի են եղել ուսումնասիրողների մի մասին. իսկ այն ուսումնասիրողները, որոնց ձեռքին եղել են դրանք (այդ թվում Ն. Թումանյանը, որի տրամադրության տակ է եղել բանաստեղծի արխիվն ամբողջովին)՝ չհրապարակված երկերի առատության պայմաններում և շահագրգռված առաջին հերթին դրանցից առավել արժեքավորների հրապարակու-

Այն բոլոր նյութերը, որոնց մասին խոսք է բացվում առաջին անգամ, սիրահոժառ մեզ են տրամագրել Արփենիկ և Քամար Թումանյանները, որի համար մենք հրապարակահոգ ենք և անհատական խոսք ենք ուղղում նրանց:

մով, ներկայացվող նյութերի տպագրության հանձնելը թողել են հետագային, Դրանք առավելապես կամ «ձեռագ» գրված տողեր են, կամ մտահղացումներ, երբեմն արձակախառն, շարադրանքներ, որոնց արժեքը ոչ այնքան բանաստեղծական կատարելության մեջ է, որքան այն բանի, որ հարստացնում և ամբողջացնում են մեր ունեցած պատկերացումները բանաստեղծի մտորում-նեղի և կյանքի այս կամ այն ժամանակահատվածի մասին: Այս իմաստով տեղին է վկայակոչել ժողովրդական իմաստությունը, թե չհղկված ալմաստն, այնուամենայնիվ, ալմաստ է և ոչ ապակի, ուր մնաց, որ բերվող օրինակների մեջ հղկված կտորներ էլ կան:

Հստ մոտիվների Հ. Թումանյանի անտիպ բանաստեղծությունները կարելի է բաժանել երեք խմբի.

ա) Ալբոմային ոտանավորներ:

բ) Երգիծական-սոցիալական մոտիվներ:

գ) Բանաստեղծի անանց վշտի արտահայտություններ՝ կապված հայ ժողովրդի ողբերդական ճակատագրի հետ:

Հ. Թումանյանը հայտնի է եղել որպես հանպատրաստից բանաստեղծության անզուգական վարպետ: Նրա այդ հազվագյուտ տաղանդն արտահայտվել է ինչպես խոր սոցիալական և իմաստասիրական գաղափարներ արձարծող բանաստեղծություններում, այնպես էլ առօրյա դեպքերին, շրջապատի մարդկանց կամ իր իսկ սովորություններին և տրամադրությանը նվիրված ալբոմային ոտանավորներում ու, նույնիսկ, զանազան չափածո ընծայականներում՝ հասցեագրված մտերիմ մարդկանց: Այդպիսիներից է, օրինակ, «Իր սիրելի Մխիթարին» տողով սկսվող ընծայականը:

Այս ոտանավորներից յուրաքանչյուրն իր պատմությունն ունի: Օրինակ, ինչպես հայտնի է, 1896 թ. մարտի 24-ին Մ. Վարդազարյանի ալբոմում Հ. Թումանյանը գրել է «Երբ թույլ եք տալիս, որ Ձեր ալբոմում» սկսվածքով ոտանավորը², որը թափանցիկ ակնարկ է պարունակում բանաստեղծի երկու մտերիմների՝ Փ. Վարդազարյանի և Մ. Տեր-Անդրեասյանի գրական ոչ մեծ շնորհի մասին: Վերջիններս, նույն ալբոմում, առանձին-առանձին պատասխանել են նրան. Մ. Տեր-Անդրեասյանը գրել է. «Միայն բանաստեղծներն են, որ պատասխանատու չեն իրենց գրածների համար», իսկ Փ. Վարդազարյանը՝ «Արձակ գրողները ներքուստ համոզված են լինում և երբեմն իսկ ստիպված են լինում օրը ցերեկով խոստովանելու, որ իրանք իրանց բանաստեղծներ համարողների ահագին մեծամասնությունը լուրջ նախալներ են»:

Հեղվական փոխհրաձգությունը երեք մտերիմների միջև սրանով չի ավարտվել. Փ. Վարդազարյանի և Մ. Տեր-Անդրեասյանի այս տողերին Հ. Թումանյանը պատասխանել է հետևյալ քառատողով, որը ներկայացվում է առաջին անգամ.

Կարծես թե քիչ էր, ինչ որ արեցին,
Դեռ այնուհետև դարձյալ գրեցին,
Որ էլ ավելի պարզորոշ ցույց տան,
Թե որքան համառ եր կան:

² Հոգհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1950, էջ 464:

Նույն վեճի կրակահերթերից մեկն է նաև մի ուրիշ անտիպ ոտանավոր.

Հե՛յ, ակսոս էջեր...
Ի՞նչ հիմար վեճեր,
Ի՞նչ անմիտ տողեր,
Խենթ բառախաղեր
Լցրեց... այն էլ ո՞վ,—
Մի ամբողջ ժողով,
Հրատարակեց
Որ Հորիզոնը
Նվ խալտառակեց
Մեր ղատկի տոնը...

Այստեղ բանասիրական առումով հետաքրքիր է երկու հարց.

Նախ այս անտիպ ոտանավորի զրույթյան ժամանակը, ապա այն, թե ի՞նչ է ակնարկում բանաստեղծը գրելով. «Մի ամբողջ ժողով Հրատարակեց Որ Հորիզոնը»:

Առաջինի մասին ասենք, որ, ըստ եկեղեցական օրացույցի, 1896 թ. դատիկը տոնվել է մարտի 24-ին, ուրեմն ոտանավորը պիտի գրված լինի կամ այդ օրը, կամ դրանից անմիջապես հետո: Ինչ վերաբերում է վերը բերված ակնարկին, ապա ուզում ենք հիշեցնել, որ 1893 թ. հոկտեմբերին Հովհ. Թումանյանը, Փ. Վարդաղարյանը և Ա. Բարխուդարյանը հիմնադրել են մի հրատարակչական ընկերություն, որը պիտի կոչվեր «Խրճիթներ և միայն խրճիթներ» կամ «Ժողովուրդ»: Հոկտեմբերի 26-ին Փ. Վարդաղարյանի տանը տեղի է ունեցել ընկերության անդամների խմբագրական ժողովը, որի նախաձեռնությամբ 1894 թ. լույս է տեսել «Հորիզոն» հանդեսի առաջին համարը: Զ. Թումանյանն ակնարկում է այս «խմբագրական ժողովը» և ոտանավորն էլ ստորագրել է՝ «Ժողովի անդամներից մեկը»:

Այժմ ներկայացնենք մեկ այլ ալբոմային ոտանավոր, որտեղ Զ. Թումանյանը խոսում է իր մի սովորության մասին: Ոտանավորը բաղկացած է երեք մասից ու գրված երեք օրում, նույն Մ. Վարդաղարյանի ալբոմում: Առաջին երկու տողերը թվագրված են 1898 թ. նոյեմբերի 26, հաջորդ երկու տողը՝ նույն թվականի դեկտեմբերի 24, իսկ վերջին քառատողը՝ դեկտեմբերի 28:

Ահա դրանք.

Այսօրից ահա անում եմ ես ուխտ,
Որ այսուհետև չըխաղամ էլ թուղթ:

Բայց բանը շուտով այնպես պատահեց,
Որ բանաստեղծը խոսքը չըպահեց:

Էլ ինչ թաքցնեմ, եղով իմ հոգուն,
Երկու անգամ էլ տարվել եմ թաքուն,
Բայց թե չըթողնեմ այժմ թղթախաղ,
Ուրեմն էլ չըկա ինձ նման սարսաղ:

1894 թ. հունիսի 2-ին Հ. Թումանյանը գրել է ևս մի բանաստեղծություն, որի հասցեատերը անհայտ է մեզ, Բացառված չէ, որ դա նույն Մ. Վարդապետյանը լինի:

Բանաստեղծությունը հավատարիմ բարեկամության մի հավաստիացում է՝ հորինված Հ. Թումանյանին հատուկ անբռնազբոս տողերով.

Այս տողերը գուցե ջնջվեն,
Գուցե կորչի հուշագիրը,
Բայց ինձ համար դրանք ցավ չեն,
Ոչ էլ այդ է իմ խնդիրը.

Ծն քեզանից ուրիշ անանց
Մի հիշատակ եմ խնդրում,—
Թող կենդանի մնամ պահված
Մտքիդ պայծառ հուշագրում:

Որպես անկեղծ մի բարեկամ,
Որ կարող էր այդ խնդրել,
Որ խոսքերից հազար անգամ
Ավելի է քեզ սիրել...

Այս շարքի անտիպ բանաստեղծություններից ամենամշակվածը, թերևս, ռոմանտիկ վերնագրով ոտանավորն է, թվագրված՝ «1895 թ., 11 նոյեմբերի»։ Մեզ է հասել սրա երկու ինքնագիր՝ առաջին գրառումը և մշակված տարբերակը՝ գրված Ախալքալաքում և նվիրված օրիորդ Կ. Վարդանյանցին՝ հետագայում Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Տ. Գյուզալյանի կնոջը։ Ըստ երևույթի, օրիորդը Հ. Թումանյանից վերցրել է մի հիշատակարան և առիթ տվել գրելու այս տողերը.

Ո՞վ տառավ

Դուք ինձնից տարաք հիշատակարան,
Իսկ ես ձեզանից տարա հիշատակ—
Մեկը կորչելու, մաշվելու մի բան,
Մյուսը կմնա երկար ժամանակ:

Դուք այս նյութական թուղթը գրելու,
Իսկ ես զգացմունք սրբալույս կրելու,
Ես չեմ մոռանալ, երբ հողմեր ու ձյուն
Մարմնիս և ճամփույս շուրջն էին տիրում,
Ծն ոգևորիչ այնքան ջերմություն
Կտա զգայուն, ազնիվ սրտերում

Ասացեք, իրավ
Մեզնից ո՞վ տարավ:

Այս բանաստեղծության կապակցությամբ ցանկանում ենք բանասերների ուշադրությունը հրավիրել երկու կետի վրա: Նախ, ի՞նչ է ակնարկում բանաստեղծը դրելով. «...երբ հողմեր ու ձյուն Մարմնիս և ճամփույս ջուրջն էին տիրում» և ապա, չէ՞ որ հնարավոր է, որ ակնարկված «Հիշատակտրան»-ը դեռ պահվում է ինչ-որ տեղ, 1917 թ. վախճանված տիկին Ծ. Գյուլալյանի ժառանգների մոտ: Երկու կետերի առիթով էլ մեր պրպտումներն առայժմ արդյունք չեն տվել: Հնարավոր է, որ մեկ ուրիշն ավելի հաջողակ լինի:

Այս շարքի բանաստեղծությունների մասին մեր խոսքն ավարտենք՝ մեջ բերելով մի շատ մտերմիկ հատված, դուցե ամենամտերմիկը, որը նույնպես իր պատմությունն ունի:

1919 թ. հունիսի 19-ին բանաստեղծի դուստր Թամար Թումանյանը ձեռքն է առել «Անուշ»-ի 1916 թ. հրատարակությունը և կարդալով «Ամպերը դանդաղ ուղտերի նման...» տողով սկսվող հատվածը, բարձրաձայն արտահայտել է իր հիացմունքը: Բանաստեղծը ժպտալով ասել է. «Աղջիկս ինձ նոր ճանաչեց» և տեղնուտեղը նույն գրքի անվանաթերթի վրա գրել:

Իմ Թամարիկին,
Որ իր հայրիկին
Ճանաչեց նոր—
էսօր:

1880-ական թվականների ավարտն ու 90-ականների սկիզբը Հ. Թումանյանի կյանքում եղել են հասարակական-սոցիալական տենդագին մտորումների տարիներ: Թիֆլիսի կոնսիստորիայում պաշտոնավարելիս բանաստեղծն արդեն ոչ թե տեսական, այլ բուն գործնական կյանքում է բախվել սոցիալական անարդարությանը և իր հոգեկան խռովքն ու բողոքն արտահայտել «Զարամիտներին», «Դարձյալ նրանց», «Միամիտներին» և նման բանաստեղծություններում, որոնք նախապատրաստել են «Պոետն ու մուսան» սատիրապոեմը: Ահա, թե դրանցից մեկի՝ «Այստեղ ահա ինչ են ասում» տողերով սկսվող բանաստեղծության մասին ինչ է գրում դրա առաջին հրատարակիչ Ա. Ինճիկյանը. «Այս գրվածքը բովանդակում է Թիֆլիսի կոնսիստորիայում Թումանյանի պաշտոնավարության հետ կապված տհաճ և անհրապույր պարտականությունների նկարագրությունը, հոգեկան ապրումների անմիջական արտահայտությունը: Ուտանավոր-նամակը հիշեցնում է «Պոետն ու մուսան» պոեմը: Շատ հավանական է, որ սա հենց այդ պոեմի սկզբնական շրջանի սեագիր մտորումներն են, սեագիր հատվածներ, որ հեղինակը հետագայում մշակել է»³:

Նույն ժամանակ (հավանաբար 1890 թ. հունիսին) վերը հիշատակված ուտանավոր-նամակի հետ Հ. Թումանյանը հղացել է նաև մեկ այլ բանաստեղծություն, որի սկզբնամասը շարադրված է արձակ, իսկ վերջին հատվածն ունի հետևյալ կերպարանքը.

Նա մի տգետ, աղքատ մարդ էր,
Որ ուզում էր դառնալ տերտեր,

3 «Թումանյան, ռուսամասիրություններ և հրապարակումներ», հ. 1, Երևան, 1964, էջ 396:

Այսքանն, հարկավ, բավական էր,
Բայց կան նաև քանի բաներ,
Գիտելիքներ և՛ նոր, և՛ հին
«Ուսմունք պատշաճ քահանային»...

Սա գրված է այն ժամանակ, երբ մտերիմներից շատերը բանաստեղծին հորդորում էին քահանա ձեռնադրվել, մի բան, որի դեմ ըմբոստանում էր նրա հոգին: Այս հակակրանքն է արտահայտված մեջբերված հատվածում, որն իր էությունով սերտորեն կապված է վերը հիշատակված բանաստեղծություններին: Ցուց տանք ավելի անմիջական աղբյուրակցություն՝ մեջբերելով «Այստեղ ահա ինչ են ասում» սկսվածքով բանաստեղծության հետևյալ քառատողը.

Այն գյուղացին, որն որ թողած
Սարումն իրանց ոչխարն անտեր,
Եկավ այստեղ այնքան սողաց,
Մինչև վերջը դարձավ տերտեր...⁴

Սոցիալական անարդարության դեմ ուղղված այս բողոքն ու հակակրանքը մի քանի տարի հետո դարձան սքանչելի չափածո ֆելիետոններ՝ «Հայի զարմանքը», «Հայի տրտունջը», «Հայի ցավը», «Գրականական մազանդան»: Ինչ ինչ հասարակական հնչեղություն են ունեցել սրանք՝ երևում է մեզ հասած վկայություններից: Ահա, թե ինչ է գրում ինքը՝ Հ. Թումանյանը սրանցից մեկի՝ «Պաշտոնու տրտունջը» ոտանավորի մասին. «Այստեղ (Շուլավերում—Խ. Գ.) մի ներկայացման համար մի ձեռաց ոտանավոր գրեցի Շուլավերի պաշտոնիների վրա: Այնպիսի մի աղմուկ, մի խռովություն ընկավ, որ ներկայացման երեկոյան եթե նայեիր փողոցները—կկարծեիր, թե մի կարևոր բունթ կա գյուղում: Միծաղելին այն էր, որ ամբոխը—պաշտոնիների ոտնատակած ամբոխն ավելի խիստ էր հուզվել: Սպառնալիքն այնպես մեծ եղավ, որ երիտասարդները պատրաստած ոտանավորը հանեցին ցուցակից, վախենալով, որ ինձ հետ անախորժություն պատահի, ինչպես նամակներով ու պատգամավորների բերանով սպառնում էին»⁵:

Այս մոտիվները մշակելիս Թումանյանը երբեք ձեռքից չի գցել երգի-ճանքի զենքը, որն այս դեպքում տարբերվում է նրա նուրբ հումորից՝ արտահայտված հեքիաթներում և ժողովրդական թեմաների չափածո մշակումներում: Հենց այսպիսի մերկացնող երգիծանքի մի նմուշ է նաև «Ны господи! այսուհետև» տողով սկսվող բանաստեղծությունը, որը նույնպես ներկայացվում է առաջին անգամ:

Եթե «Պաշտոնու տրտունջը» ֆելիետոնի մեջ Հ. Թումանյանը մերկացնում է գյուղի «վիճակավորներին», որոնք, ինչպես իմացանք, արգելել են ոտանավորի հրապարակումը, ապա այս դեպքում նրա ծաղրն ուղղված է քաղաքի (Բիֆլիսի) «պաշտոնիների» դեմ, որոնք չեն մտահոգված քաղաքի կարգուկանոնով և բնակիչների բարեկեցությամբ:

⁴ Նույն աեղում, էջ 291:

⁵ Հոսվ հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1945, էջ 142—143:

Մեղ են հասել բանաստեղծության երկու ինքնագիր: Առաջինը փոխնի-փոխ չափածո և արձակ տողերով շարահարված մտահղացումն է, երկրորդը՝ համեմատաբար մշակված, թեև, դժբախտաբար, նույնպես թերի տարբերակը:

Գրության ժամանակը որոշելու միակ կովանը ոտանավորում հղած ակնարկն է այն մասին, թե գրելիս բանաստեղծն արդեն ութ երեխա է ունեցել: Լ. Թումանյանի ութերորդ երեխան՝ Արեգը, ծնվել է 1901 թ. նոյեմբերի 27-ին, հաջորդ, իններորդ զավակը Սեդան է՝ ծնված 1905 թ. հունվարի 5-ին: Այստեղից հետևում է, որ բանաստեղծությունը գրվել է 1901 թ. նոյեմբերի 27-ից մինչև 1905 թ. հունվարի 5-ն ընկած ժամանակահատվածում, որը կազմում է երեք տարի մեկ ամիս ութ օր:

Ահա երկրորդ ինքնագիրն ամբողջովին.

Hy господа! այսուհետև
Զի կարելի նայել թեթև,
Պետք է հոգալ, չըսկել արժուն,
Ինչու է թանկ փողոցում ձուն,
Կամ թե անտեր այն շրները
Ուր են քնում գիշերները...
Պետք է այստեղ հարցը փակել
Ու միաձայն աղաղակել.
Քաղաքի շահ,
<Հա՛, հա՛, հա՛, հա՛...>
Կամ կենտրոնը էլեկտրական.
Ինչու քաղքից մոտ է այնքան,
Որ թե մի օր պայթի հանկարծ,
Հինգերորդից ներքև կածի
Ութ երեխուն բանաստեղծի,
Նրանց կանի հանկարծամահ,
Հա՛, հա՛, <հա՛, հա՛...>

Ռուսական առաջին հեղափոխության բարձրացող ալիքն իր յուրօրինակ արձագանքն է գտել մեծ բանաստեղծի ստեղծագործության մեջ: Նպատակ չունենալով այս տեսակետից մանրամասն քննել նրա հարուստ ժառանգությունը, հիշեցնենք միայն երկու փաստ: Հայտնի է, օրինակ, որ դեռևս 1903 թ. ապրիլին, Լ. Թումանյանի թարգմանությամբ սոցիալ-դեմոկրատական թուղիկների վրա տպագրվել և մայիսմեկյան ցույցի ժամանակ տարածվել է Ա. Պուշկինի «Աղատություն» բանաստեղծության մի քառատողը.

Ատում եմ քեզ և քո գահը
Սիահեծան գոռոզ ցար,
Եվ քո ու քո որդոց մահը
Պիտի տեսնեմ անպատճառ:

1967 թ. «Գարուն» ամսագրի 11-րդ համարում մենք բանասերների ուշադրությունը հրավիրեցինք այն բանի վրա, որ 1904 թ. հուլիսի 14-ին «Պրո-

լևտարիատի կոիվը» թերթի հավելվածում տպագրված «Ինտերնացիոնալ»-ի հատվածը. —

Ոչ ոք չի կարող — ոչ ցար, ոչ աստված,
Նույնիսկ հերոսը տալ մեզ փրկություն,
Միայն սեփական ձեռքով կոշտացած
Մենք կնվաճենք սուրբ ազատություն: —

Նախնաբար նույնպես թարգմանել է Հ. Թումանյանը:

1969 թ. լույս տեսավ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուն, որտեղ զետեղված են նաև Սարգիս Խանոյանի հուշերը (էջ 389 — 394), որոնք հաստատում են մեր կռահումը:

Երրորդ օրինակը բերենք անտիպ նյութերից:

Մեր ձեռքին եղած ձեռագրերի մեջ կա մի բանաստեղծության էսքիզ, որը վրաստանում ծավալված հեղափոխական հուզումների անմիջական արձագանքն է: Այդ հուզումները տեղի են ունեցել 1905 թ. գարնանը Մինգրելիայի Մուխուրի, Չոդա, Նափիճխավո, Սկուրի և մի քանի այլ բնակավայրերում: Նույն թվականի ապրիլի 1-ին ապստամբ գյուղացիներն սպանել են ատելի կալվածատիրոջ՝ իշխան Դադիանուն: Խռովությունը բավականաչափ երկար է տևել, բայց, ի վերջո, ցարական կառավարությունը հրով ու սրով ճնշել է այն: Ահա, թե այդ մասին ինչ ենք կարդում «Революция 1905—1907 гг. в Грузии» գրքում. «Целых три дня продолжался погром селения Мухури и его окрестностей: Чога. Напичхаво, Скури...» (էջ 508):

Մեզ հասած էսքիզից կարելի է ենթադրել, թե բանաստեղծությունը պիտի ունենար սյուժե և արտացոլեր մի կոնկրետ դեպք՝ տեղի ունեցած ապստամբ Նափիճխավո գյուղում: Մեջ ենք բերում առաջին հատվածը, որը քիչ թե շատ պատկերացում է տալիս ոտանավորի բնույթի մասին.

Պարոնների դարը անցավ,
Պատճառը չեն հարցնում,
<տողն անընթեռնելի է>
Մենգրելիայի աշխարհում:

Պարոնները կերան ամբողջ
Աշխատանքը ժողովրդի,
Ժողովուրդն էլ ոտի կանգնեց —
Դառնա տերն իր աշխատանքի:

էն անաստված պարոնները
Հավ չթողին ոչ մի գյուղում
Եվ գյուղացին ու տերերը
Կռիվ արին Նապիճխավո... և այլն:

Այստեղից դժվար չէ անցնել մեզ հասած անտիպ նյութերի երրորդ խմբին, որը բանաստեղծի հայրենասիրության վկայությունն է մեկ այլ տեսակետից: Նթե մեկ տասնամյակից մի փոքր ավելի առաջանա՞նք ու քննենք

2. Թումանյանի հույզերն ու մտորումները Հոկտեմբերի նախօրյակին և հեղափոխության ժամանակ, ապա չենք կարող չնկատել, որ պրոլետարական հեղափոխության մեջ նա տեսնում էր ոչ միայն սոցիալական մեծ տեղաշարժերի հնարավորությունը, այլև մեր ժողովրդի փրկությունը ֆիզիկական բնաշնչումից: Դարասկզբին ժողովրդի ճակատագրի համար ունեցած նրա տաշնապը, որը նրա հայրենապաշտության արտահայտման ձևն էր միայն, շատ հաճախ ներփակվում էր «հայոց վիշտ» այնքան տարողունակ և այնքան շոշափելի բառերի մեջ.

Հայոց վիշտը անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին,
էն սև ծովում տառապելով,
Լող է տալիս իմ հոգին...

Այս տաղնապը նրա ստեղծագործության վրա թեթև է վաղ պատանության տարիներից: Արևելյան Հայաստանում ցարական բռնապետության հալածանքները (հիշենք, թեկուզ, իշխան Գ. Գուլիցիների փոխարքայության տարիները՝ 1897—1904 թթ.), Արևմտյան Հայաստանում ավելի վատթարը՝ XIX դ. 60—70-ական թվականներից պարբերաբար կրկնվող կոտորածները, որ ավարտվեցին մեծ եղեռնի սարսափներով, մշտապես խոշտանգել են հայրենասեր բանաստեղծի սիրտը և ստեպ-ստեպ պոռթկացել, որպես անանց վշտի ու մորմոքի բանաստեղծություններ:

Մեզ հասած նոր նյութերի մեջ ևս բավականաչափ տեղ են գրավում դրանք:

Եթե իմանաս իմ ցավ, հոգիս,
Եթե իմանաս ինչու եմ տխուր,
Կգովես անշուշտ կսկիծը սրտիս
Նվ ինձ քո կրծքին կսեղմես ամուր:

1890-ական թվականներին գրված այս տողերը, որոնք ձայնակցում են «Պատվեր», «Օտարության մեջ», «Ինձ մի խնդրիր, ես չեմ երգի» և նման բանաստեղծություններին, անշուշտ սոսկ այսպես կոչված ներանձնական, կամ, առավել ևս, բայրոնական համաշխարհային վշտի արձագանք չեն, այլ վերը հիշատակված կոնկրետ տաղնապի արտահայտություն, որը եթե այստեղ ձևավակերպվում է, որպես «սրտի կսկիծ», ապա «Ինձ մի խնդրիր, ես չեմ երգի» տողով սկսվող գողտրիկ բանաստեղծության մեջ դառնում է «սիրտը բռնած», «հուր հառաչանք» և «սև գիշեր»:

Առհասարակ 2. Թումանյանը պայծառատես բանաստեղծ է, նա երբեք չի կորցնում փրկության հեռանկարը: Ինչ վերաբերում է նրա վշտին, ապա եթե մի դեպքում դա հայրենասիրական «հայոց վիշտն» է, այլ դեպքում «հայի վիշտ» է, այսինքն մի վիշտ, որ հատուկ է հայ ժողովրդի զավակներին, որ հայերեն է: Այս դեպքում խառնվում են ներանձնական ու հասարակական բանաձևերը, կամ, որ թերևս ավելի դիպուկ է, անձնական զգացումը բարձրանում է մինչև խոր հասարակական հնչեղություն: Ահա մի օրինակ, որը նույնպես ցարդ անձանոթ է ընթերցողին.

Ոչ, էլ երգել չեմ կսուռզ ես

Անմիտները մտան պարտեզ—
Ամբողջ բուրմունք ու գարուն,
Ու շիմացան—ինչու այնպես
Եվ անուշ էր, և սիրուն:

Ու ոտքեցին, ու ճմլեցին
Ծաղիկները բուրավետ,
Ու շիմացան—ինչ եղավ գեղն
Ու բուրմունքը նորա հետ:

Այս նույն տրամադրությունն է արտահայտում նաև հետևյալ անտիպ քառատողը.

Գիշերը բազմեց լեռների վրա,
Թանձր մռայլը կոխեց դաշտ ու ձոր,
Ոչ մի լուսատու երկնքում չկա,
Մենակ մի լույս է փայլում հեռավոր...

Առաջին հայացքից սոսկ վարպետորեն գծված բնանկարի մի բեկոր է սա, ինչպիսին է, օրինակ, «Համերգ» բանաստեղծությունը: Սակայն սրա մեջ երևում է նաև մի ներքին տագնապ, որը մեզ ուրիշ աշխարհներ է տանում: Արդյոք ինչո՞վ էր ավարտվելու ոտանավորը: Թվում է, թե կարելի է կռահել այս հարցի պատասխանը, եթե նկատի ունենանք նույն տարիներին գրված «նկարիչ Գ. Բաշինջաղյանի «Ձորագետը գիշերով» նկարի առջև» բանաստեղծությունը, որը նույնպես սկսվում է որպես նկարչի բնանկարի տպավորությամբ հորինված բանաստեղծական բնանկար: Բայց ահա, թե ինչ խորհուրդ ունի բանաստեղծության վերջին հատվածը.

... Բայց ահա այնտեղ, ձորի խորքերում
Մի մենակ վառվող լույս է երևում.
Այո՛, մի խուղ կա այն ձորի միջին,
Դու ճանաչո՞ւմ ես նորա բնակչին...
Օ՛հ, չես ճանաչում—անձանոթ ես դու,
Բայց թե գիշերը և նրա հոգու
Վարողանայիր տեսնել և զգալ...

Ահա թե որն է բանաստեղծի վշտի ակունքը. հայի, անդնդախոր ձորում էլու՜ եկած խուղի բնակիչ հայի «հոգու գիշերը», որը ճանաչելն ու որին սփռա՜յելը նա յուրաքանչյուր ճշմարիտ արվեստագետի պարտքն է համարում:

Աստարակական, հայրենասիրական այս մեծ վշտի արտահայտություններն են նաև մեր ձեռքի տակ գտնվող «Ձոնգուրիս», «Ախ, ես դեռ մանկուց...» և մի քանի այլ բանաստեղծություններ:

Այժմ մի քանի խոսք մի անտիպ բանաստեղծության մասին, որը մեծ քաղաքացու հոգեկան տվյալտանքի այն պահի արտացոլքն է, երբ, ինչպես ասում են, դանակը ռսկորին է հասել, և վիշտն այլևս փոխարկվում է վրեժ-

խնդրության հրավերի Դժբախտաբար, այս բանաստեղծությունը ևս մեզ է հասել սևագիր վիճակում, այսինքն՝ այս դեպքում ևս դորժ ունենք դեռևս չհղկված ավամտի հետ, բայց մենք լավ գիտենք, թե ինչպիսի փայլ էր ստանում այս սիպի բանաստեղծությունները, երբ խոսքի կախարդը կրկին անդրադառնում էր դրանց։

Գերեզմաններում վաղուց հանգչում են
Նրանց շարչարված մարմիններն անշունչ,
Իսկ հոգիները անթև շոքում են
Սիրած վայրերում, սիրելիների շուրջ։

Այժմ հալածել դժվար է սրով
Այն եթերային գոյություններին,
Որ զարմանալի զորություններով
Գիտեն մոտենալ մարդկանց սրտերին։

Հաճախ մտորման ժամին լոռեցու
Ուրվական ձայներ ալլ եղանակով
Նոսում են այնպես և ոտի հանում
Դժգուր հոգին համարձակ մտքով։—

... Այլ կարճամիտ մարդ, միտքդ բեր դու մեզ,
Հավիտենական հո չես ապրելու,
Մի օր ծնվել ես, մի օր կըմենես,
Ի՞նչ ես համբերում ճաղքին թշնամու...

Ներկայացնելով այս սի բանի նշխարները, որոնցով երանկացել ենք վերջին մի բանի տարվա մեր որոնումներում, մենք ավելի ևրջանիկ կլինենք, և թե մեր խոսքը բանասերներին դրդի նոր որոնումները, բանդի մեծ բանաստեղծի լուրաբանչուր տողը գանձ է մեզ համար, մեր ժողովրդի ազգային հպարտությունը։

НЕОПУБЛИКОВАННЫЕ СТИХОТВОРЕНИЯ ОВАНЕСА ТУМАНЯНА

ХАЖАК ГЮЛНАЗАРЯН

Резюме

Литературное наследие Ованеса Туманяна издавалось не раз. Из этих изданий следует отметить книгу «Художественные произведения», изданную в 1934 г., и шеститомник академического издания (1940—1959), в который вошли также более ста стихов, опубликованных в периодической печати после смерти поэта. Однако в архивных фондах хранится немало рукописей стихов, по сей день не известных читателю. Публикуемые здесь 13 ранее не издававшихся стихов великого поэта помогают глубже вникнуть в идейно-художественную суть его поэзии и ближе ознакомиться с его жизнью.